

ԱՐԳՆԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՅԻՋԱՏԱԿԻՆ

Իրեք շաբաթ սորանից առաջ հեռագիրը մեզ գուժեց Արդար Յովհաննիսեանի անակնկալ մահը: Առաջին նուագին ես դժուարանում էի հաւատը ընծայել դորան, քանի որ բօթաբեր հեռագիրը, տուած Թիֆլիզից տեղւոյս ա. քահ. Տէր-Յարութիւնին, յայտնի չէ ումից, անստորագիր էր: Բայց տըխուր իրողութիւնը շուտով հաստատուեցաւ նաև ուրիշ աղբիւրներից և մեզ մնում էր միայն խոնարհուել Նախախնամութեան անդառնալի վճռի առաջ և հանգուցելու բազմաթիւ բարեկամների հետ՝ ողբալ նորա անսպասելի և տարածամ մահը: Մենք ոչ դիտաւորութիւն, ոչ էլ յաւակնութիւն ունինք թարմ գերեզմանի առաջ գնահատել հանգուցելու հասարակական գործունէութիւնը. դա ապագայ պատմիչ գործն է: Մեր նպատակն է հակիրճ խօսքերով արձանագրել այստեղ այն անջնջելի տպաւորութիւնը, որ թողեց մեզ վրայ անգուգական գործիչը, երբ ի մօտոյ ճանաչեցի նորան: Մեր ծանօթութիւնը սկսուեցաւ իմ ուսանողութեան ժամանակ, 1875 թ. Ս. Պետերբուրգում հետևեալ հանգամանքներում. իբր նորեկ ուսանող Կայսերական Համալսարանի ես մի յօւրուած էի զրել «Մեղու Հայաստանի» լրագրում ¹⁾ Բեսարաբիոյ Հայոց մասին «Խ. Ննգիրբարեան» ստորագրութեամբ: Անդրանիկ դրութիւնս մի մոռացուած աշխարհի ազգայնոցս մասին, չգիտեմ, ո՞ր արժանեաց համար, գրաւել էր մի քանի անձանց ուշադրութիւնը: Յիշում եմ, որ լրագրի համարը, ուր լոյս տեսաւ յօդուածս, Ս. Պետերբուրգում ստացուեցաւ շաբաթ օրը. իսկ կիրակի՝ պատարագից յետոյ, բարեկամներիցս մէկը՝ Փիլիպպոս Վարդանեանցը մօտենալով ինձ՝ յայտնի բարեւար հանգ. Մկրտիչ Սանասարեանցի կողմից հրաւիրում է ինձ Պասսաժի սրճարանը, որ հեռու չէ Հայոց եկեղեցուց: Ճշմարիտն ասեմ, այս ան-

¹⁾ Գուցէ, Մշակում, լաւ չեմ յիշում. Մ. Շ.

սպասելի հրաւերը ինձ շատ նեղը ձգեց. հասարակաց թնչ կարող է լինել, մտածեցի ինքս ինձ, մի աննշան, կիսակիրթ ուսանողի և մեծատուն Սանասարեանցի մէջ և կամեցայ խորշել այդ ծանօթութիւնից: Բայց չիտակ և անկեղծ Վարդանեանցը առանց ուշադրութիւն դարձնելու իմ չփոթմունքիս, բռնեց ձեռքիցս և քաշեց տարաւ դէպի Պասսաժ: Ներս մտանք սրճարան. մի սեղանի շուրջը բոլորել էին մեր յայտնի բանասէր Կ. Եզեանցը, նորա կողքին ինքն Մ. Սանասարեանցը, իսկ նոցա դիմացը 25—26 տարեկան մի վայելչակազմ գեղեցիկ երիտասարդ, որ մեծ ախորժակով նախաճաշիկ էր վայելում: Պ. Եզեանցին ես ծանօթ էի. իսկ միւս երկուսի հետ ինձ ծանօթացրեց Փ. Վարդանեանցը, կոչելով երիտասարդին Արզար Յովհաննիսեան: Մենք միմեանց ձեռք մեկնեցինք ու նստանք. իսկ ծերունի Սանասարեանցը պատուիրեց սպասաւորին երկու բաժակ սուրճ բերել նորեկներին համար: Խօսակցութեան միջոցին Սանասարեանցը հարցրեց, ես եմ արդեօք Բեսարաբիոյ Հայոց մասին գրուած յօդուածի հեղինակը և երբ լսեց դրական պատասխանս, սկսեց տեղեկութիւն հարցնել նոյն ազգայնոց մասին: Այսպէս էր մեր առաջին ծանօթութիւնը Արզար Յովհաննիսեանի հետ, որ պատրաստուում էր զնալ Թիֆլիզ: Մի քանի օրից յետոյ Невский Проспект-ում ես երկրորդ անգամ պատահեցայ Արզարի հետ. նա ճեմում էր Վարդանեանցի ընկերակցութեամբ: Կարճ խօսակցութիւնից յետոյ մենք բաժանուեցանք և այնուհետև 21 տարի շարունակ էլ միմեանց չտեսանք: Յիշեալ տեսակցութիւնը, ինչպէս յիշեցի, տեղի ունեցաւ 1875 թ. աշնանը. դա այն ժամանակն էր, երբ Փ. Վարդանեանցը, նոր վերադարձած արտասահմանից, բնակութիւն էր հաստատել Ս. Պետերբուրգում, ուր Սանասարեանցի աջակցութեամբ պատրաստուում էր հրատարակել մի ամսաւիր «Լումայ» անունով: Յայտարարութիւնը այդ առթիւ արդէն լոյս էր տեսել Հայոց պարբերական մամուլի էջերում: Գրեգոր Արծրունին, ծաղրելով Փ. Վարդանեանցի ձեռնարկութիւնը, «Մշակ»ում գրում էր հետևեալը. «Լուում ենք, որ պ. Փ. Վարդանեանը մտադիր է Լումայ անունով մի ամսագիր հրատարակել Արխանգէլսկում»¹⁾, կամենալով դորանով հաս-

¹⁾ Բայց յետոյ Ս. Պետերբուրգում հրատարակում էին «Արաքս», ապա «Բանբեր» թէև ոչ կանոնաւոր ամսագիր. իսկ

կացնել, թէ անխորհուրդ բան է հայկական կենդրոններից հեռու այնպիսի մի գործի ձեռնամուխ լինելը: Բարեսիրտ Վարդանեանցը ծիծաղելով հանդերձ, երբեմն վշտանում էր այդ սրամտութիւններից ասելով. «Մեծ քաջութիւն է Արծրունու կողմից, ձեռքում իբրեւ զէնք ունենալով իւր Մշակը, յարձակուել անզէն մարդու վրայ»: Հրատարակութեան իրաւունքը սպասելու միջոցին Վարդանեանցը զանազան կողմերից արդէն ստանում էր պատրաստի յօդուածներ և ի միջի այլոց, Գամառ-Փաթիլայի ոտանաւորները, որ միշտ մի առանձին հրահուանքով կարդում էր ինձ. օրինակի համար «Վանեցի կրտսերին» և այլն: Վարդանեանցին, ինչպէս յայտնի է, չյաջողեցաւ ամառգիր հրատարակելու ուստի հեռանալով մայրաքաղաքից դէպի Կովկաս, նա մտաւ մանկավարժական ասպարէզ: Լուսնայի հրատարակութիւնը, գուցէ և զլուխ գար, եթէ ինքը Վարդանեանցը ընտանեկան գործերի պատճառով ստիպուած չլինէր վերադառնալ իւր ծննդավայրը. իսկ իրաւունքը կարելի էր ձեռք բերել ուրիշի անունով, քանի որ Վարդանեանցին համակրողներ կային այնտեղ:

Բայց ահա վրայ հասաւ 1876 թ. երբ Հայոց գրականութեան հորիզոնի վրայ յանկարծ երևեցաւ «Փորձ» հանդէսը: Ինձ ծանօթ Սրգար Յովհաննիսեանի խմբագրութեամբ: Փորձը շուտով դարձաւ կանոնաւոր ամսագիր. իսկ նորա երիտասարդ խմբագիր-հրատարակիչը կարողացաւ համախմբել իւր շուրջը այն ժամանակի մեր լուսագոյն գրականական ոյժերը և փառաւոր կերպով յառաջ տարաւ գործը, կարծես, ի հեճուկս Գր. Արծրունու, որ այսպէս ողջունեց այս նոր հանդէսը. «Փորձը փորձեց իւր փորձը, այժմ կարող է դադարել»: Մշակի խմբագիրը այստեղ էլ հաւատարիմ մնաց իւր քմահաճութեան: Ս. Էջմիածնում և այլուր մինչև այժմ էլ չեն մոռացուած այն խօսքերը, որոնցով Մշակը ողջունեց Գէորգեան ձեմարանի բացումն. այն է՝ «այսօր Էջմիածնի ձեմարանը բացուեցաւ. ուրեմն արեգակը խաւարեցաւ»: Դորանից արդէն պարզ էր, որ Արգար Յովհաննիսեանը չէր կարող ուրիշ խրախոյս սպասել Գր. Արծրունուց, որ կարծում էր, թէ Հայոց պատմութիւն

Վանքիկայում և Ափրիկայում նոյնպէս լոյս են տեսնում հայ թերթեր և հայկական կենդրոնները չեն արգելում նոցա հրատարակութեանը: Մ. Շ.

նը Մշակից է սկսւում: Այն ինչ Փորձը կարճ միջոցում այնքան յառաջացաւ, որ նորա հռչակը մինչև Եւրոպա հասաւ: Այս իրողութիւնը նորա հակառակորդներն էլ չեն ուրանալ, եթէ առաքելութիւն ունին առ ժամանակ թօթափելու իրանցից սնոտի անսխալականութիւնը: Այս նկատողութիւններէց չը պէտք է եզրակացնել, թէ սոյն տողերիս գրողը հայ լրագիր Մշակի թշնամի էր կամ է. քաւ լիցի. ես ինքս էլ իմ աննշան տեղովս յօգուածներ եմ տուել Մշակին, թէև ոչ յաճախ և ունիմ Գր. Արծրունուց շնորհակալութեան նամակներ. բայց այսու հանդերձ ես չէի կարող ի պահանջել հարկին լուծեամբ անցնել այն մի քանի դէպքերը, ուր Մշակի խմբագիրը ուղղակի մեղանշում էր արդարութեան դէմ, չիմանալով օրէկտիվ լինել իւր դատողութիւնների մէջ: Այդ ախտով շատերը մեզանում վարակուած են և դա, ոչ ոքի համար գաղտնիք չէ, մեր ափական կրքոտ և անզուսպ տեմպերամենտի արդասիւք է:

Բայց դառնանք Փորձին. հանդէսը փորձեց իւր փորձը, բայց դորա համար նա արժանի է ոչ թէ դատապարտութեան, այլ մեր խորին երախտագիտութեան, որ լոյս աշխարհ հանեց մի շարք հեղինակներ, որոնց գրուածքները մեր նոր գրականութեան լաւագոյն զարդերն են կազմում: Հարկ կայ արդեօք մի առ մի յիշելու պ. պ. Ալ. Սրիքեանին, Ստ. Պալասանեանին (Գրիչ), Պ. Պաօշեանին, Գամառ Քաթիպային, Գ. Բարխուդարեանին, Բաֆֆիին, Ներվանզադէին և ուրիշներին, որոնց հեղինակութիւնները Արգարը հիւրընկալում էր իւր Փորձում: Սակայն վերջինս ինչ տուեց իւր խմբագիր հրատարակչին, բացի տասնեակ հազար նիւթական վնասներից հասարակութեան անտարբերութեան շնորհիւ: Այդպիսի հանգամանքներում, բընական է, որ Արգարը դադարեցնէր Փորձը և ձեռնամուխ լինէր մի այլ աւելի ձեռնտու հրատարակութեան—Արձագանքը չաբաթաթերթին: Բարձր գնահատելով Արգարի մատուցած ծառայութիւնները Հայոց մանուկ գրականութեան, ես և նկատելով նորա բուռն ցանկութիւնը շարունակելու հասարակութեան ծառայելու, ութսունական թուականներին ես էլ սկսեցի ձրիաբար աշխատակցելու նորա Արձագանքում, ուր, բացի մանր մունր յօդուածների, զետեղեցի պրօֆ. Ք. Պատկանեանի երկասիրած Վրաց Քրոնիկոնի ամբողջ թարգմանութիւնը: Արգարը իմ աշխատակցութեանս առթիւ ինձ ոչ մի խօսք չգրեց, չխրախուսեց. դորա մէջ կարիք էլ չկար. մենք միմեանց

հասկացել էինք. մեր մէջ կայացել էր մի ներքին համաձայնութիւն կամ, ինչպէս ասում են ֆրանսիացիք, entente cordiale. Նա իմ բոլոր յօդուածներս տպում էր: Բայց, ահա, առ ժամանակ ես ընդհատեցի իմ թղթակցութիւններս ընտանեկան հանգամանքներին շնորհիւ: Արձագանք չարաթաթերթը լրագիր դարձաւ: Ես լուութիւն սկսեցի: Արգարը այլ ևս չհամբերեց և արժ. Գիւտ. ք. Աղանեանցի միջնորդութեամբ ուղարկելով լրագրի համարները, խնդրեց չարունակել իմ թղթակցութիւնները: Մեծ լրջմտութեամբ և ըստ չափու կարողութեանս աշխատեցի գոհացնել նորան մինչև Արձագանքի դադարումը: Մինչև այդ ժամանակը Արգարը գիմեց ինձ մի քանի յանձնարարութիւններով և եթէ չեմ սխալուում, խնդիրը կլիշէնքի մասին էր չարաթաթերթի համար: Յետոյ ինքն էլ եկաւ մի քանի անգամ Մոսկովա: Առաջին անգամ Ստոկհոլմ գնալիս Արևելագիտաց ժողովի 1892 թ. բայց ինձ չկարողացաւ տեսնել. ամառ էր. ես գնացել էի Բեսարաբիա: Նրկորդ անգամ նա եկաւ 1896 թ. գարնանը: Սո տեղեկութիւն չունէի այդ մասին: Բայց մի օր յանկարծ ես կարճ նամակ եմ ստանում իմ հանգուցեալ բարեկամ՝ Իսահակ Ժամհարեանից, որ հրաւիրելով ինձ իւր մօտ ճաշի, գրում էր, թէ նորա տանը կը հանդիպեմ մի շատ ցանկալի բարեկամի: Շատ գլուխ կոտրեցի, բայց չկարողացայ գուշակել, թէ ո՞վ էր այդ ցանկալին: Պէտք է նկատել, որ Իսահակը Արձագանքի սիրահար էր և միշտ կարգալով այն, խօսում էր հետս թէ իմ յօդուածներս և թէ Արգարի մասին. ուստի յառաջ քան տեսնելն Արձագանքի խմբագրին, Խ. Աբովեանի երկերի հրատարակիչը արդէն ծանօթ էր նորա հրապարակախօսական գործունէութեան: Ահա նշանակեալ ժամին գալիս եմ Իսահակի տունը. նախասենեկում նա ինքն է ինձ դիմաւորում: Սիրելի բարեկամ, ասում եմ նորան ողջունելուց յետոյ, այսօր դու շատ ծածկամիտ ես. ինչ նորութիւն ունիս, ասա, տեսնեմ: Ս'կ, ինքդ կիմանաս, պատասխանում է Իսահակը և բռնելով ձեռքիցս տանում է ներս, աւր բազմաթիւ հիւրերի թւում նկատում եմ յանկարծ Արգար Յովհաննիսեանին, որին քսան և մէկ տարի չէի տեսել:

1875 թուականի վայելչակազմ երիտասարդը այժմ դարձել էր մի թիկնաւէտ, հաստ մարդ, արևոր, համարեա, մազերով ու զուարթ դէմքով և աչքերով: Քաղցր ժպիտը երեսին նա մեկնում է ինձ ձեռքը, որը ես պինդ սեղմում եմ մի քանի

վայրկեան: Կռուկնկ ուստի կուգաս, հարցնում եմ ես, ծառայ եմ ձայնիդ: Հայոց աշխարհէն, պատասխանում է Արգարը և մի կարճ խօսակցութիւնից յետոյ տանտէրը հրաւիրում է բոլոր հիւրերին բազմել ճաշի: Աւելորդ է ասել, որ օրուայ հետոսը Արգարն էր և բնական է, որ ամենքիս ուշադրութիւնը նորա վրայ էր կենդրոնացած. նա իրան պահում էր մեծ տակտով, իբրև կատարեալ մի ջենտլմէն և գիտէր ամեն մէկին առ լուրջ պատասխան համեմատ սուր զուարճախօսութեամբ, առանց դուրս գալու վայելութեան սահմաններից: Ճառեր և կեցցէները միմեանց յաջորդում էին. ուրախութիւնը հասարակաց էր և անկեղծ:

Մի քանի օրից յետոյ, Ժամհարեանց գերդաստանի մեծը՝ Յովհաննէս Ժամհարեանցը կամելով պատուել Արգար Յովհաննիսեանին, առանձին բազմամարդ ճաշկերոյթի հրաւիրեց նորան, ուր շատ ճառերով դրուատեցին նորա բազմակողմանի գործունէութիւնը: Ընդունելութիւնը հասարակութեան կողմից շատ սիրալիւր էր. համարեա, մի օր էլ հանգիստ չէին թողնում նորան: Վերջապէս Արգարը շնորհ բերեց ինձ մօտ և մեր մէջ տեղի ունեցաւ քաղցր բարեկամական խօսակցութիւն և, ի միջի այլոց, Արձագանքի մասին նա ինձ հաղորդեց, որ եկամուտը ծածկում է, վերջապէս, ծախսը: Դա շատ մխիթարիչ լուր էր ինձ համար. ես էլ խոստացայ շարունակել աշխատակցութիւնս: Այս միջոցին ներս մտաւ ինձ մօտ շնորհալի դերասան Գէորգ Պետրոսեանը, որ մօտ մի տարի Մոսկվայումն էր: Անմահ Պ. Ադամեանից յետոյ, դա առաջին տաղանդաւոր դերասանն էր, որին վիճակուեցաւ ինձ տեսնել բեմի վրայ օր. Քինի դերումս Պետրոսեանի դերակատարութիւնը այնքան հաճելի էր ինձ, որ ես տպաւորութիւնս իւր ժամանակին հաղորդել էի Արձագանքին, որ և հիւրասիրել էր այն իւր էջերում, ինչպէս և Ադամեանի մասին գրածներս: Բայց... այստեղ, ձեռքս դողում է... գրելը չէ հնազանդում ինձ և արտասուքը խեղդում է ինձ, երբ մըտաբերում եմ այն տեսարանը, որ տեղի ունեցաւ իմ առաջև: Առաջին ողջոյնից յետոյ, երբ Արգարը հարցրեց Պետրոսեանից, «Դուք Մոսկվայում ի՞նչ էք շինում և լսեց սորա պատասխանը, թէ գործ է որոնում այստեղի թատրոնական ասպարիզում, մեր մինչև այժմ լուրջ և պաղարիւն Արգարը յանկարծ կարծես, կրակ կտրուեց. դա մի ուռմբ էր, որ անսպասելի կերպով պայթեց: Ի՞նչ էք ջլատում մեր թատրոնի սակաւա-

Թիւ ոյժերը, ո՛ւր էք ցիր ու ցան յինում, գոչեց նա խստիւ. ձեր տեղը Կովկասումն է. այնտեղ պէտք է կենդրոնացնէք ձեր ոյժերը և գործէք. և ոչ թէ օտար երկիրներ թափառելով՝ վերջնական հարուած տաք ձեր ձեռքով այն նուիրական գործին, որի հիմնադիրները անհուն ջանք և աշխատութիւն են գործածել Հայերիս մէջ թատրոն ստեղծելու համար: Դուք պիտի շարունակէք սկսած գործը, պնդում էր Արզաբը. յիշում էք Ադամանի օրերում մեր բեմի բարգաւաճումը. վերադարձէք նորան վաղեմի պերճութիւնը: Պետրոսեանի ամենայն մի պատասխանը ու պատճառաբանութիւնները Արզաբը ամիսակերտուկ կերպով հերքում էր ու ջրում. դիմադրութիւնը անհնարին էր: Պետրոսեանը զգում էր ինքն էլ իւր առաքելութիւնների թուլութիւնը և իւր ընդդիմախօսի տրամաբանութեան անդառնալի ոյժը. Սա լուս ու մունջ դիտում էի այս պայքարը, ուր Արզաբը երևում էր այլ կերպարանքով. դա այլ ևս իդէալիստ, վերացական գաղափարներով զբաղւած խմբագիր չէր, որ գրասենեակում նստած լանդ քան զքիթ իւր վինչ ոչ տեսանէ, այլ գործնական, հեռատես և հարազատ գաւակն էր հայութեան, որի ծառայութեանը նա նուիրել էր իւր բոլոր մտաւոր, բարոյական և նիւթական կարողութիւնը: Պետրոսեանին ուղղած «Բնչ էք ջլատում մեր թատրոնի սակաւաթիւ ոյժերը» հարցից պարզ երևում էր, թէ որչափ բարձր էր գնահատում Արզաբը մեր շնորհալի գերասանի տաղանդը, որ արդարև Հայոց բեմի լաւագոյն զարդերից մէկն է այժմ. Պետրոսեանը հասկացաւ պարզ ակնարկը և վերադարձաւ Կովկաս: Թո՛ղ ներէ մեզ քանքարաւոր դերասանը մեր ակամայ մերկացումը, որ անհրաժեշտ էր Ա. Յովհաննիսեանի գործունէութեան կողմերից մէկը բնորոշելու համար. Վերջին հրաժեշտի միջոցին Արզաբին ասացի, որ իմ այցելութեանը չսպասէ այստեղ, հիւրանոցում և թո՛ղ չգարմանայ, եթէ նոյն 1896 թուին ինձ տեսնէ Թիֆլիզում: Արզաբի գնալուց յետոյ անցաւ մի քանի ամիս, վրայ հասաւ Յունիւր, երբ պատրաստուում էի ճանապարհ դուրս գալ նախ՝ դէպի Թէոդոսիա, ապա Սև ծովով, Բաթումի վրայից Թիֆլիզ (այս ճանապարհորդութեանս նպատակը նկարագրեցի Արձագանքի էջերում 1897): Մի քանի օր դորանից առաջ մեզ մօտ հանդիպեցաւ Թիֆլիզի նախկին քաղաքագլուխ՝ Ալ. Մատինեանցը, որին խօսակցութեան միջոցին յայտնեցի Կովկասի մայրաքաղաքը գնալու դիտաւորութիւնս.

խորհուրդ չեմ տալ ձեզ յուլիսին գտնուիլ մեր Բարիլոնեան հնոցում, որտեղից ամենքը աշխատում են փախչել ամառանոցներ, լաւ է գնացէք օգոստոսին, նկատեց հիւրս: Անհնարին է, օգոստոսին այստեղ պէտք է լինեմ, պատասխանեցի: Այնուհետեւ երկարօրէն խօսեցինք Թիֆլիզի մասին և ի միջի այլոց, Արգաւրի գործունէութեան մասին իբրեւ Դումայի ձայնաւորի, որ քաջ յայտնի է հայ հասարակութեան, ուստի աւելորդ է ծանրանալ գորա վրայ:

Ահա, վերջապէս, Թիֆլիզումն եմ: Միւս օրը (յունիսի վերջերում, 25-ին էր, կարծեմ.) շտապում եմ Արգաւրի մօտ, նորա պաշտօնատեղին. անցնում եմ երկու երեք ընդարձակ սենեակներով և ահա մեր անզուգական բարեկամը, նստած իւր գրասեղանի առաջ, մի ինչ որ բաներ է գրում: Խորասուզուած գործի մէջ նա արագ արագ շարժում է գրիչը, առանց նկատելու թէ իւր շուրջը ինչ է կատարւում. նա վստահ է, որ ամենքը զբաղուած են իւրեանց գործով և չէ սխալւում: Բանկում կարգապահութիւնը կատարեալ է: Զգուշութեամբ մօտեկում կարգապահութիւնը կատարեալ է: Զգուշութեամբ մօտեկում եմ նորա սեղանին և ասում, հղջ լեր, Արգաւր ջան: Զարմացած գլուխը բարձրացնելով բացականչում է, Շովրեան, երբ եկար: Երեկ, պատասխանում եմ լակոնական ոճով: Նորա կողմից տեղում է վրաս հարցերի մի տարափ: Սեղանի վրայ թափած են երկայն ժապաւէնի նման թերթիկներ վրայ հայերէն գրուած: Այս ինչ բաներ են, հարցնում եմ: Արձագանքի համարների նիւթերն են, ասում է Արգաւրը: Ապա չար լեզուները ասում էին, թէ Արգաւրը բան չէ գրում: Զկամենալով խանգարել Արգաւրին, խնդրեցի նորանից Ա. Երեցեանի, Գաբ. Սունդուկեանցի և Մշակի խմբագրատան հասցէները և հեռացայ: Հետեալ օրը նա ինձ սպասելու էր երեկոյեան իւր մօտ, որպէս զի միասին գնայինք ինձ ծանօթացնելու իւր մի բանի բարեկամներէ հետ, որոնց թուումն էին ձերուսի Գ. Բարխուդարեանց (Շիլլերի չնորհալի թարգմանիչը), Գ. Զմէկեանը՝ հայ թատրոնի հիմնադիրներից մէկը, Սեդ. Մանդինեանցը, Ալ. Թարխանեանցը, «Թատրոնի» խմբագիրը, վիպագիր Պ. Մուրացանը, Քամալեանը, սոլարանատէր Մնացական Մարտիրոսեանցը, իմ հին բարեկամ Սարապետ Էդիլխանեանը: Մի քանի անգամ բախտ ունեցայ գտնուել յիշեալ նոր բարեկամներին շրջանում, ուրախ ժամեր անցուցանել նոցա հետ, խօսել, վիճել, յաճախակի աւելի լսել նոցա, քան խօսել: Աւելորդ է ասել, որ խօսակ-

ցութեան ուղղութիւն տուողը Աբգարն էր իւր սրամտութիւններով:

Ես երբէք չեմ մոռանալ այն քաղցր տպաւորութիւնները, որ դործում էր իմ վրայ այս ընկերական շրջանը. ուր միշտ նախադաշնում էր Աբգարը և ուր իւրաքանչիւրը մեզանից թամադայի հրամանով մի ճառ պիտի ասէր. օրինակի համար մի օր Սեդ. Մանդինեանցը, գերմանացի գիտնականին յատուկ լըջութեամբ, ընտրուեց Աբգարի երիտասարդութիւնը ու նորա վերջին տասնեակ տարիների գրականական և հասարակական դործունէութիւնը, որ մենք խորին ուշադրութեամբ լսում էինք: Մէկ էլ տեսնես, Աբգարը ընդհանուր լուսութեան միջոցին նկատեց. «Սեդրաք, подлещь-ութիւն մի արաւ: Ծիծաղից թուլացանք ամենքս այսպիսի անակնկալ գնահատում լսելով: Մի ուրիշ անգամ, պատկառելի հնագէտ Ա. Սրիցեանը կհանէր ծոցից մի թուղթ և կկարդար մի հետաքրքիր հնութիւն, որ շատերիս համար, յայտնի բան է, նորութիւն էր: Մի երեկոյ էլ նոյն հնագէտը սկսեց պատմել Սֆիպտոսի մասին և այդ երկրի թագաւորներից մէկին կոչեց СИГЯЗМҮНДԷ: Համեստութեամբ ընդհատեցի նորա պատմութիւնը նկատելով. ներեցէք, պ. Սրիցեան, դուք, գուցէ կամենում էք ասել Сего-стрихъ կամ Рамзесъ II, վասն զի СИГЯЗМҮНДԷ-ը Լեհաց թագաւոր էր: Սրիցեանը շփոթուեց, իսկ ես սաստիկ խղճահարուեցայ, որ աւելթ դարձայ նորա շփոթութեան: Ինձ համար անսխորժ լուսութիւնը խանգարեց մեր թատրոնի վետերան Գ. Չմլեանը, որ հեգնելով ծերունուն բարձրաձայն աղաղակեց. Երիցով, մունդրեկ, ձէնդ կտրի, փոսը կընկնես: Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ և Սրիցեանը սթափուելով դիմեց ինձ հետեւալ խօսքերով. պ. Շովրեան, դուք երբ պիտի ուադ լինիք մեր գլխից: Նրկու օրից յետոյ: Զճմարիտ. այո: Ո՛ւր էք գնում, Դէպի Էջմիածին: Դէհ, եթէ այդպէս է, շարունակեց նա, վաղը հրամեցէք ինձ մօտ ճաշի, Հայրիկին յանձնարարութիւն ունիմ ձեզ տալու: Արդէն մէկը ունիմ, դա. կլինի երկրորդը, պատասխանեցի և խոստացայ միւս օրը գալ նորա տունը: Մեր խնճոյքներում, ինչպէս վերը յիշեցի, երբեմն տեղի էին ունենում շատ առաք վիճաբանութիւններ. օր. Գ. Չմլեանի և Կ. Եդիլխանեանի մէջ. առաջինը պաշտպանում էր Հանգ, Ամիրիկեանին, երկրորդը Ադամեանին էր գովում. Աբգարը հաշտեցնում էր նոցա. երբեմն ընդհարումը ծագում էր իմ և Աբգարի

մէջ: Տեղեակ չլինելով Փորձի հրատարակութիւնից կրած վնասները, ես առաջարկում էի նորան վերսկսել հանդիսի հրատարակութիւնը, խոստանալով աշխատակիցներ և բաժանորդներ գտնել: Արգարը, կարծես, տատանւում էր, բայց Սրիցեանը բռնուն կերպով դիմադրում, էր այս առաջարկութեանս. և միօր դարձեալ ծոցից հանեց մի թուղթ, ուր մանրամասնօրէն հաշուած էին այն վնասները, որ ունեցել էր հրատարակիչը՝ զանազան տարիներում: Փաստերը շատ պերճաւորս էին և առարկելու ոչինչ չէր մնում ինձ:

Սրկու շաբաթից աւելի մնալով Թիֆլիզում, ես յաճախակի տեսնում էի Արգարի հետ և այդ միջոցին միւր խօսակցութեան նիւթը անսպառ էր լինում, մանաւանդ մամուլի և դուրա գլխաւոր գործիչների վերաբերութեամբ: Այստեղ պարտքեմ համարում արձանագրել հետևեալ իրողութիւնը, որ բնորոշում է իմ հանգուցեալ բարեկամիս. իբրև շիտակ և անաչառ ևրոպացու՝ իւր միւս պաշտօնակից—հայ խմբագիրների մասին խօսելիս, ոչ մի գանգատ ոչ մի դժգոհութիւն ես չսեցի նոցա հասցէին. ընդհակառակն նա յարգանքով էր խօսում թէ պ. Ս. Սպանդարեանի և թէ Ա. Քալանթարի մասին: Միայն մի անգամ, երբ ես կէս յանդիմանական ձևով հարցրի, թէ ինչո՞ւ նա, իբր կշիռ ունեցող մարդ հայ հասարակութեան մէջ, չկարողացաւ իւր ժամանակին Գր. Արծրունու անշարժ կայքերի վաճառման առաջն առնել և թոյլ տուեց օտարների ձեռքը անցնելու, Արգարը փոքր ինչ վրդովուած պատասխանեց, դու իզուր ես ինձ մեղադրում, որովհետև չգիտես, թէ ինչ յամառ մարդ էր Արծրունին. ես նորան համոզում էի սպասել փոքր ինչ և չշտապել, մինչև որ ես կխորհրդակցեմ մի քանի հարուստ հայ, վաճառականների հետ, գուցէ մի հնար կգտնենք նորա գալիքէնը ազատելու. բայց նա մերժեց իմ առաջարկութիւնը: Մի այլ անգամ խօսք եղաւ Ս. Հախումեանցի մասին, որ աշխատակցում էր Արձագանքին: Այս առթիւ ես նկատեցի, թէ պ. Հախումեանցը խիզախ գրիչ ունի, բայց սակաւ փորձութիւն: Արգարը դորան պատասխանեց. նորա գրաւքնիչը ես ինքս եմ և նուրա ոչ մի տողը առանց կարդալու չեմ թողել տպագրելու Արձագանքում: Նոյնը նա կրկնեց պ. Հախումեանի ներկայութեամբ բարեկամների չրջանում: Շատերը, անշուշտ, յիշում են, որ հիանալի պատմական վէպերի հեղինակ Րաֆֆին երբ հեռացաւ Մշակից, Արգարը հրաւիրեց նորան աշխատակցել Արձա-

գանձին: Իմ հարցին, թէ ինչով էր դեկավարում նա այսպէս վարուելով, Ա. Յովհաննիսեանը պատասխանեց. Բաֆֆի տաղանդով միայն, որովհետեւ հասարակութիւնը կարգում էր նորա գրուածքները յափտակութեամբ: Միթէ ես սխալուեցայ կամ Արձագանքը տուածէջ դորանից. հարցրեց Արգարը իւր հերթին: Քաւ լիցի, ասում եմ. բայց չէ՛ որ Արծրունին այդ դէպքի առթիւ գրում էր Մշակում, թէ Բաֆֆին հեռանալով իւր լրագրից իբր թէ կորցրել է իւր առաջուայ քանքարը: Դու Արծրունու կարծիքն էր միայն, որ պարտաւորիչ չէր ընթերցող հասարակութեան համար, պատասխանեց Արգարը և մի փոքրիկ ծիծաղաշարժ դէպք պատմեց Մերենցի և Բաֆֆի յարաբերութիւններէ: Բաֆֆին, իբրև խորամանկ պարսկաստանցի, մի գործում մեղանչել էր Մերենցի դէմ. դա էլ մի օր հանդիպելով նորան ասում է, դու Մեղք-ղադէ չես, այլ Վերեմ-զեդէ ես):

Գալով Կովկասի մայրաքաղաքը, յայտնի բան է, անհնարին էր չը տեսնել մի քանի ուշադրութեան արժանի հաստատութիւնները. ուստի, ի միջի այլոց, կամեցայ զննել Կովկասեան Թանգարանը: Ես քեզ մի լաւ չիչերօնէ տամ, ասաց Արգարը, և ակնարկելով Ա. Նրիցեանի վրայ, որ մեծ յօժարութեամբ յանձն առաւ բացատրութիւններ տալ ինձ Թանգարանի իրեղէնների մասին: Մեզ հետ միւս օրը, առաւօտեան միացաւ Նաւ Ս. Մանդինեանը և մենք երկու ժամի չափ շրջեցինք բոլոր սենեակները, մանրամասնօրէն դիտելով՝ առարկաներ և լսելով մեր պատկառելի հնագէտի մեկնութիւնները: Նոյն օրը, ինչպէս խոստացած էի, ճաշի հանդիպեցայ պ. Նրիցեանի մօտ, որին դտայ նորա ընդարձակ մատենադարանում, նստած սեղանի առաջ: Նա կարդում ու համեմատում էր Ս. Էջմիածնից ստացած ահագին ֆօլիաները, որտեղից նիւթեր էր քաղում իւր գիտնական հետազոտութիւնների համար: Առաջին ողջոյնից յետոյ ես նստայ նորա գիմացը և պ. Նրիցեանը սկսեց պատմել ինձ իւր պարապմունքների մասին և ցոյց տալով պատկառելի ձեռագիր ժողովածուները, բացատրեց թէ Ս. Էջմիածնից է բերել տալիս: Միթէ թոյլ է տրւում Ս. Աթոռի մատենադարանից դուրս հանել այսպիսի Թանկագին մատեանները. չէ՛ որ դոքա կարող են զանազան ձախորդութիւնների պատանել, կորչել, վերջապէս, այրուել: Հոգևոր վարչութիւնը ողորմած է դէպի ինձ, ասաց յարգելի հնագէտը և քանի անգամ կատարեց իմ խնդիր-

քը: Իսկ այս տարի, յառաջ տարաւ իւր խօսքը պ. Նրիցեանը: Բաւական երկար մնացի էջմիածնում. այնտեղ վեհափառ Հայրիկը ինձ յատկացրեց մի առանձին սենեակ, ուր մատենադարանից բերում էին ինձ հարկաւոր ժողովածուներ, նաև ճաշս էլ մատակարարում էին: Պարապելու միջոցին դռներս պինդ փակում էի, որ վարդապետները կամ եպիսկոպոսները չխանգարեն զբաղմունքներս. այդ բանը մեր հոգեւոր հայրերը քաջ գիտէին. Բայց մի անգամ դուռս յանկարծ բացւում է և ներս է մտնում ինքն Վեհափառ Հայրիկը և ժպիտը երեսին ասում է. ինձի՞ ալ չես ընդուներ, պ. Նրիցեան: Խնդրեմ, շնորհ բերեցէք, Վեհափառ Տէր. ես այստեղ ժամանակաւոր հիւր եմ միայն: Տէրը Դուք էք: Այսպէս, երբեմն Հայրիկը կգար իմ խուցը: փոքր ինչ զրոյցներ կանէր հետս, ապա, կերթար մի բարձր տեղ և կդիտէր ձիննապատ Մասիսի գագաթը:

Ճաշի ժամանակ Նրիցեանը յիշեց ինձ տալիք յանձնարարութիւնը և ասաց. դուք, անշուշտ գիտէք, որ Հայրիկը Ս. Էջմիածնում հիմնել է երկու յարկով մի գեղեցիկ թանգարան, ուր, ինչպէս լսել եմ, մտադիր է փոխադրել մատենադարանը՝ հին գրչագիրների հետ միասին: Խոնարհաբար խնդրեցէք իմ և իշխան Աբամովիք Լազարեանի կողմից Վեհափառ Հայրիկից՝ ձեռագիրները չարժել տեղից, վասն զի արդի կամարակապ շէնքի մէջ դռքա աւելի ապահով են կրակի վտանգից: Ուրախութեամբ կկատարեմ Ձեր խնդրքը, յարգելի բարեկամ, պատասխանեցի ես, քանի որ ես ևս ձեզ հետ համաձայն եմ այս բանում: Յիշում էք, երբ 1881 թ. Կոմս Ուվարովը Գէորգ IV կաթողիկոսի օրով Էջմիածնում նստած՝ պարապում էր մեր հին ձեռագիրների նկարագրութեամբ, նա նոյն կարծիքը յայտնեց մատենադարանի շէնքի յարմարութեան մասին. Բոլորովին ճշմարիտ է, յարեց Նրիցեանը և փոխեց խօսակցութեան նիւթը: Ճաշից յետոյ նա ցոյց տուեց ինձ իւր հին ձեռագիրները, որոնց մէջ մէկը քարացած էր: Նրիցեանը կենդանի տարեգիր էր և շնորհալի զրուցող. նա ինձ երկար պահեց և շատ բաներ հաղորդեց մեր ներկայ տակաւին կենդանի և հանգուցեալ գործիչների մասին, Ներսէս V-դի, Մսեր մագիստրոսի, Ս. Նազարեանցի, Սմ. Շահաղիզեանցի: Ի դէպ վերջինս մասին խօսելիս, նա յարեց, լսել եմ որ. պ. Շահաղիզեանցը շատ վշտացած է ինձանից. եղբայր, մենք անձնական թշնամութիւն չունինք, ինչո՞ւ է նեղացած վրաս. եթէ նա ինձ տար այն գումար-

րը, որ ծախսել էր իւր Հրապարակախօս ստուար գրքի տպագրութեան վրայ, եւ ինքս ինձ կհերքէի: Դուք իդուք էք կարծում, թէ նա մի մեղամարդ մարդ է, նկատեցի ես. ընդհակառակն՝ նա շատ սրամիտ և զուարճախօս է և եթէ դուք, հանգամանքների բերմամբ, իրար հանդիպէիք, մի ժամուայ խօսակցութիւնից յետոյ սերտ բարեկամներ կդառնայիք: Շահագիգեանցը միշտ վեհանձն և առատաձեռն մարդ էր և է մեր հասարակութեան մէջ. երանի՛ թէ նորա նմանների թիւը մեծ լինէր մեր ազգի մէջ: Ուրեմն, ցտեսութիւն, ասաց Երիցեանը, ես շատ կցանկայի, որ Ս. Էջմիածինը ձեր վրայ լաւ տպաւորութիւն անէր. յամենայն դէպս դուք ինձ վերադառնալով կպատմէք, ինչ որ կտեսնէք այնտեղ: Միւս օրը ես ճանապարհ ընկայ դէպի Մայր Աթոռը, մինչև Աղստաֆա երկաթուղով, յետոյ ճեպակառքով մինչև Երևան: Սա դիտաւորութիւն չունիմ մանրամասնօրէն նկարագրելու ճանապարհորդական տպաւորութիւններս. այսօր քանս միայն կասեմ, որ Աղստե գետի հոսանքով անցնելիս, մենք հանդիպեցանք դէպի սարեր քոչուող թերեքմէ թուրքերին, որոնց անվերջ, նահապետական սայլերը երկու անիւներով ալակիսի փոշի էին բարձրացնում, որ կատարելապէս խեղդուում էին: Բացի դորանից Երևանի մօտ այնպիսի մի անսովոր ջերմ բռնեց ինձ, որ ուժասպառ հասնելով քաղաք, գիշերեցի փոստի կայարանում: Միւս օրը մի հիանալի առաւօտ էր. կառք վարձեցի և ուղղեցի ճանապարհս դէպի Ս. Էջմիածին: Քաղաքից դուրս գալով դաշտ՝ հարցրի կառապանիս, թէ ուր է Մասիսը: Ա՛յ, աղա ջան, ձախ կողմումն է: Նայում եմ, բայց ոչինչ չեմ նշմարում: Կառապանս կրկնում է, լաւ նայեցէք սպիտակ ամպերի տակից: Արգարե, մի քանի վայրկեան ամպերի կոյտերը զննելուց յետոյ, նկատում եմ մեր պատմական հինաւուրց վեհ Մասիսը, որի ձիւնապատ կոնաձև գագաթը դուրս ցցուած է ամպերի միջից: Շուտով աջ կողմից նկատում եմ Արագածի գլուխները: Տեսարանը գեղեցիկ էր և փառահեղ. երկար ժամանակ աչքերս բեռեցի նոցա վրայ, մի րոպէ անգամ չթողնելով ձեռքիցս բինօկլիւ: Անցաւ մի քանի գիւղեր և ահա հեռուից երևում է Ս. Էջմիածնի՝ Կաթողիկէն կարմիր ներկած, Հռիփսիմէն և այգիները: Կառապանս շուտով հասցնում է ինձ Վաղարշապատ, կանգնում է մի կրպակի առաջ և ես մտնելով ներս հարցնում եմ բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանցի տունը: Բայց նա գնացել էր ընտանիքով Բիւ-

բական ամարանոց. ուրեմն, հրամայում եմ, կառապանիս, քնի դէպի Ղազարապատ, ուր հիւրընկալ վարդապետը ինձ յատկացնում է մի սենեակ: Թողնելով այստեղ ճանապարհորդութեան իրեղէններս, շտապում եմ վանք, Սուքիաս սրբազանի տեսութեան, որին ճանաչում էի Օգոստայից 1895 թուից: Սրբազանը ինքը դիմաւորեց ինձ և միասին շրջեցինք և զննեցինք վանքի շէնքերը: Կարճ միջոցում ծանօթացայ միաբանութեան մի քանի անդամների հետ. այն ինչ գաթրջու միջնորդութեամբ Բիւրական լուր էի ուղարկել իմ ժամանելուս մասին: Վեհափառ Հայրիկը Ս. Էջմիածնից բացակայում էր և գտնւում էր Բիւրականի ամարանոցում: Դիւանապետ հ. Նահապետեանը չգիտէր, թէ երբ է գալու Հայրիկը. բայց Խորէն էֆենդին հաղորդեց, թէ, գուցէ, միւս օրը Վեհափառը կվերադառնայ, որովհետև շատ գործեր են կուտակուած: Ես ցանկութիւն յայտնեցի այցելել վեհարանը և Խ. Խրիմեանը հրաւիրեց ինձ և ցոյց տուեց բոլոր սենեակները, ուր ի միջի այլոց, առանձին պահարանի մէջ, ապակեայ դռներով, կարգով շարուած էին այն բոլոր արծաթեայ փսէները, որոնց վրայ աղ ու հաց էր մատուցուած Վեհափառ Հայրիկին հայաբնակ քաղաքների հասարակութիւնների կողմից նորա 1895 թ. Ռուսիայում կատարած ճանապարհորդութեան միջոցին: Պարզեան սրբազանի հրամանով Ղուկաս սարկաւազը (այժմ վարդապետ) ուղեկցեց ինձ դէպի տաճարը, ուր իջման տեղի առաջ աղօթելուց յետոյ, դիմեցինք Գէորգ IV կաթողիկոսի շինած թանգարանը, ուր Արիստակէս Դաւթեան սրբազանը մեզ բացատրութիւններ էր տալիս զանազան հին զգեստների, և իրեղէնների մասին: Տէր իմ, որչափ աղքատ էր Էջմիածնի թանգարանը Մոսկովայի Ռուսաց վերափոխման տաճարի և Троицкая Палата-ի զգեստարանների համեմատութեամբ: Տխուր իրականութիւն, որ առիթ է տալիս նոյնչափ տխուր խորհրդածութիւններին: Խեղճ Հայոց սրբավայր, ինչքը չանցան քո զլիսով դարերի ընթացքում զանազան մահմեդական բռնակալներից. միթէ դառնութեան բաժակը տակաւին չ'է լցուած: Յայտնելով խորին շնորհակալութիւնս Արիստակէս սրբազանին, դիմեցինք հ. Ղուկասի հետ դէպի մեր հռչակաւոր մատենադարանը, ուր Սահակ վարդապետը ցոյց տուեց մեզ հին գրչագիրները, որոնք Էջմիածնի ակնաւոր զարդերն են կազմում, վայելելով գիտնական աշխարհի յարգանքը: Այստեղ ցանկացայ տեսնել երե-

ւելի փղոսկրեայ աւետարանը X դարու, որ ի միջի այլոց կոմս Ուվարովը նկարագրել է իւր Ծѣтіадаинская библиотека յօդուածում: Մատենադարանում այս միջոցին պարապում էր Եղ. վ. Ջալալեանը. նա Վեհափառ Հայրիկի յանձնարարութեամբ զբաղուած էր սուրբ գրքի ձեռագիր օրինակների համեմատութեամբ և գտել էր Մնացորդաց գրքի՝ տպագրելից տարբեր մի օրինակը, որ յետոյ պրօֆ. Գր Խալաթեանցը յոյս ընծայեց Մոսկվայում ¹⁾: Այդ նոր գիւտից մի քանի նմուշներ հրատարակուեցան նոյն տարին Արարատի էջերում և մի օրինակ էլ ինձ շնորհեցին: Դուկաս սարկաւազը այստեղից առաջնորդեց ինձ դէպի նոր Թանգարանի երկարկ շէնքը, որ կառուցել է Վեհափառ Հայրիկը. դորա մակարդակը ես տեսել էի Ժամհարեանց տանը Մոսկվայում. Պահարանները դեռ ևս պատրաստ չէին և գրքերը մեծաւ մասամբ յատակի վրայ կոյտ կոյտ դարսուած էին: Ապա այցելեցի Գէորգեան ճեմարանը, որի նախասենեակում դրուած էին բեկեռագիր արձանագրութեանց քարերը: Վերջիններս, Նրեմիա սրբազանի տեղակալութեան օրերում, Արիստակէս Սեդրակեան սրբազանը ճեմարան էր փոխադրել տուել բակից, ուր դռա անխնամ ընկած էին մի ժամանակ և Մոսկվայի կայսերական Հնագիտական ընկերութիւնն իմանալով այդ, մտադիր էր խնդիր արձարծել, քարերը բերել տալու Մոսկվա պատմական Թանգարանում զետեղելու համար: Տեսչէ օգնական Կարապետ վարդապետի սիրալիր ընդունելութեան շնորհիւ զննեցի բոլոր ձեմարանը, որ իւր յարմարութիւններով լու տալաւորութիւն է Թողնում այցելողների վրայ: Լսարանները մի առանձին տան մէջ էին, ուր տեղից մենք գնացինք Մակար կաթողիկոսի շէնած տպարանը: Բաւականին ընդարձակ սենեակները դատարկ երևեցան ինձ. եթէ չեմ սխալում մէկ թէ երկու մեծ մեքենայ կար միայն-իսկ բանասերների թիւը շատ սահմանափակ: Այդ միջոցին տպւում էր Դուկաս սարկաւազի հսկողութեամբ Առաքել Դաւրիժեցու պատմութեան երրորդ տպագրութիւնը, որի առաջին թերթերը յետոյ տեսայ նոյն սարկաւազի մօտ: Այնուհետև այցելութեան գնացի մի քանի ծանօթ միտրաններին, որոնց երկուսը բնակւում էին Նր.

¹⁾ Այս հրատարակութեանը մենք առանձին չեկուցումն նուիրեցինք Հնագիտական ընկերութեան Արևելեան Մասնախմբի նիստերում. Մ. Հ.

սրբազանի կառուցած նոր շէնքում: Մեսրոպ վ. Տէր-Մովսիսեանին գտայ Արսէն վ. Ղլտնեանի հետ, նոքա զբաղուած էին Սոկրատ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութեան ձեռագիրներին համեմատութեամբ, որի տպագրութեանը ձեռնամուխ էր եղել Մեսրոպ հայր սուրբը: Այստեղ ինչ շատ զարմացրեց այն դէպքը, որ սեղանի վրայ դրուած տեսայ բազմաթիւ ձեռագիրներ, դուրս բերուած մատենադարանից: Ի՞նչ կարիք կար հազուադիւտ ձեռագիրները առնել իւր մօտ, քանի որ մատենադարանում կարելի է պարագայի, ուր շատ յարմարութիւններ կան դորա համար: Գալուստ Տէր-Մկրտչեանի սենեակում նոյնը տեսայ. այնտեղ էլ կային շատ ձեռագիրներ, թէև դոցա ներկայութիւնը հասկանալի էր. վասն զի Գալուստը իբրև տկար մարդ չէ կարող յաճախել մատենադարանը: Ղուկաս սարկաւազի մօտ էլ թափած էին ձեռագիրներ և ես յայտնեցի նորան թէ Լազարեան ձեմարանում խստիւ արգելուած է մատենադարանից դուրս հանել որևիցէ ձեռագիր: Նոյն կանոնը պահպանուած է և Ռուսիոյ մեծ քաղաքներում և այլուր: Սրը անցաւ այցելութիւններէս մէջ. միւս առաւօտը, հիւրընկալ վարդապետի մօտ թէյ վայելելիս, յանկարծ ներս մտաւ Բիւրականից եկած ազգականս, Ստեփան Յովհաննիսեանցը, որ իրեղէններս առաւ տարու իւրեանց տուն. իսկ ես գնացի հայր Նահապետեանի մօտ: Միասին դուրս գալով նորա հետ գնացինք դէպի վեհաբանը ձեմելու. այստեղ մեզ հետ միացաւ Ղուկաս սարկաւազը: Մինչդեռ երեքուկ զրոյց անելով, ման էինք գալիս առաւօտեան թարմ օդում, յանկարծ Նահապետ հ. սուրբը դրամատիկական ձայնով բացականչեց, «Վեհափառ»-ը, և մի ակնթարթում կորաւ աչքիցս: Շուարած դէս ու դէն նայելով, ես նկատեցի մի բարձրահասակ պատկառելի ծերունի, որ հեռուից յամր քայլերով մէն մենակ գալիս էր դէպի մեր կողմը: Ո՞վ է, կամացուկ հարցրի սարկաւազից: Հայրիկն է, պատասխանեց նա. ապա, մենք ո՞ւր փախչենք, շարունակեցի ես, արդէն լաւ ճանաչելով Հայաստանեայց եկեղեցու մօտեցող վեհ պետին. Գալուստն էր մի կողմ և գլուխ տանք, ասաց հ. Ղուկասը և յառաջեց դէպի վեհաբանի պատը և ես հետեցի նորան. երկուսս պահապան զինուորների նման անշարժ կանգնեցինք, աչքերս սեւեռած պարթեահասակ Հայրիկի վրայ: Սուր արծուի հայեացք նետելով մեզ վրայ, նա անցաւ մեր առաջից վեց քայլ

հեռաւորութեամբ: Առանց մի ըոպէ կորցնելու ես վազեցի Ղազարապատ, ուր Ստեփանը հաւաքուաւ էր իրեղէններս. սպասիր Ստեփան ջան, թոյլ տուր շորերս փոխեմ, Հայրիկը վերադարձաւ Բիւրականից. ուրեմն, գնանք միասին, ես քեզ նախասեռնեակում կսպասեմ, ասաց նա: Բայց այդ իսկ միջոցին Վեհաբանից մարդ եկաւ և ասաց թէ Վեհափառը ինձ կանչում է: Այսպէս շուտով, բացականչեցի ես զարմացած, չէ որ Հայրիկը յոգնած կլինի ճանապարհից: Դեհ, շտապենք, նկատեց Ստեփանը և մենք ծառայի ուղեկցութեամբ դիմեցինք դէպի Վեհաբան, որի դրան առաջ դիմաւորեց մեզ Խորէն էֆենդին: Հրամայեք, ասաց նա, բանալով իմ առաջ դուռը, Վեհափառը ձեզ սպասում է: Անմիջապէս ներս մտայ. Վեհ. Հայրիկը նստած էր զրասեղանի առաջ, որի վրայ կարգով դրուած էր մեծ կոյտ ծրարների: Գլուխ խոնարհելով, ծուներ դրի և առի Վեհափառի աջը: Նստեցէք, հրաւիրեց նա ինձ և հրամայեց սպասաւորին սուրճ բերել: Սկսեց հարցնել Մոսկովայի ազգայնոց մասին, շատերին կոչելով յահանէ յանուանէ. պատասխանելով Հայրիկի բոլոր հարցերին, ինքս էլ յայտնեցի Ա. Նրեցեանի խնդիրքը ձեռագիրների մասին և յարեցի թէ իշխան Աբամելիք Լազարեանի ցանկութիւնն էլ նոյնն է. վասն զի կամարակապ չէնք ի մէջ դռա աւելի ապահով են կրակից և այլ պատահարներից: Թող այնպէս լինի, պատասխանեց Վեհափառը և շարունակեց. լսած եմ, որ եթէ ինծի հոս չգտնէիք, պիտի Բիւրական երթայիք. ես հոս եկայ այժմ. բայց սա ձեզ չխառնեիր գնա Բիւրական. Խորէն էֆենդին ձեզ ձի կուտայ, կհեծնէք կերթաք, կիջնէք Բիւրական և միւս օրը հոնէն ձեռով կըջնէք քանի մի հին վանքեր և իբրև հնազէտ վերադառնալով էջմիածին, ինձի ձեր կարծիքը կհաղորդէք չանոնց մասին: Այսպիսի յանձնարարութիւնը թէև անսպասելի էր ինձ համար, բայց միևնոյն ժամանակ շատ քաղցր և ախորժելի հրաման էր, որ անկեղծ ուրախութեամբ և պատրաստականութեամբ ստանձնեցի վրաս: Ունկնդրութիւնը տևեց 15 ըոպէից աւելի: Սրբ դուրս եկաք Վեհափառից, անհամբեր սպասող ազգականս տաքաւ ինձ իւրեանց տուն, ուր կէս ժամից յետոյ բերին ձին: Կեանքումս երբէք ձի չէի հեծել, բայց երկիւղ էլ չէի կրում, որովհետև այդ զգացմունքը ինձ շատ սակաւ էր պաշարում: Չորս ժամին մենք ճանապարհ ընկանք: Ստեփանը իւր խուրջինները լցրած զանազան պաշարեղէններով տան համար, բեռնաւորեց իւր

ձիու վրայ և երբ ինքն էլ հեծաւ, դարձաւ կատարեալ Սանչո-Պանչո, թողնելով Դօն-Քիշոտի առաջակարգ դերը ինձ: Իմ ձի հեծնելու առաջին դերիւորը կատարուեցաւ ի ներկայութեան Ս. Կանայեանցի և հանգ. Վ. Աբովեանցի, որոնց հետ նոր էի ծանօթացել Ստեփանի շնորհիւ. նոքա կուշտ կուշտ ծիծաղում էին: Սա լամանչեան ասպետի լրջութեամբ գլուխ տուի նոցա և քչեցի ձիս, որ սկզբում մեծ դժուարութեամբ էր հնազանդուում ինձ. իսկ Ստեփանը անդադար կրկնում էր, սանձը աջ կողմը քաշիր, դէպի ձախ ուղղիր: Մէկ վերստի չափ չարչարեալոց յետոյ, շուտով հասկացայ, որ ձի քչեցն այնքան էլ խոր փիլիսոփայութիւն չէ. մէկ էլ լաւ մտրակեցի ձիս, սանձերը արձակեցի ու արշաւեցի առաջ: Յետեւում մնացած Ստեփանը աղաղակում էր, կաց, ո՛ր ես քշում, կրնկնես ձիուց. ուշադրութիւն չեմ դարձնում ու շարունակում եմ արշաւանքս: Կէս ժամից յետոյ սանձահարում եմ ձին և դառնալով յետ տեսնում եմ, որ Ստեփանի ձին հեւալով մօտենում է: Ստեփանս չէ հաւատում, թէ ես առաջին անգամ եմ ձի հեծնում: Այսպէս խօսելով հասնում ենք Ագարակ գիւղին, ուր Ստեփանը կամենում էր իւր ծանօթ թուրքերից մարդ վերցնել իբրեւ ուղեկից, ասելով թէ ճանապարհը երկիւղալի է: Բան չունենա, պատասխանում եմ ես, քշիր առաջ, շուտով կհասնէք Բիւրական, ուր և մութ գիշերով հասանք:

Ամարանոցից ոչ հեռու մեզ դիմաւորեց Յ. Յովհաննիսեանցը և շուտով միասին ժամանեցինք տուն անցնելով քարուտ, նեղ փողոցներով: Ընթրիքից յետոյ ուշ գիշերը, եղբարց Յովհաննիսեանցների ուղեկցութեամբ եկայ Վեհաբան, ուր այդ միջոցին մնում էր Վահան Էֆենդին, որ ընդունելով ինձ Վեհափառի հրամանով ցոյց տուեց ինձ իմ սենեակը: Այստեղ ես գիշերեցի: Առաւօտեան ժամի ութին երբ վերկացայ, աչքս ձգեցի պատուհանին և առաջն բացուեցաւ մի անակնկալ հիւնալի տեսարան դէպի Արարատ լեռուը. արեգակի ոսկեփայլ ճառագայթները ընկնելով նորա ձիւնապատ կատարների վրայ, յափշտակում էին դիտողիս ուշքն ու միտքը: Հիացումս այնքան մեծ էր և անդառնալի, որ քառուրդ ժամի չափ ապշած մնացի տեղումս, հազար ու մի երախտագիտութեան անլուր զգացումներ ուղղելով մտքումս Վեհափառ Հայրիկին, որ առիթ տուաւ ինձ հարեանցի այցելելու Արագածոտն նահանգի այս մի քանի վայրերը: Բնութիւնը այստեղ սքանչելի է իւր բարե-

խառն օդով, քաղցրահամ ջրով, որ գոյանալով Արագածի գագաթի վրայ հալոդ ձիւնից, հոսում է զառիվայրով իբրև

«Կարկաչահոս աղբիւր այնտեղ

Թաւալում էր մարգարիտ»։ Ըստ բանաստեղծի։

Առջևդ տարածւում են մինը միւսից գեղեցիկ տեսարաններ, հեռւաւոր գիւղեր, վանքեր Թաղուած սաղարթագեղ ծառատանների մէջ։ Նոյն պատկերը Թագաւորում է նաև Բիւրականի ամարանոցում, որ Հայաստանեայց առաքելական Սուրբ եկեղեցու Հայրապետների ամարային օթևանն է։ Բայց մեզայի հակառակ կողմը տես. այստեղ խօսողը մարդու մտքին և հայեացքին դարձեալ նահապետական բնութիւնն է և միայն բնութիւնը։ լիովին բացակայում է գեղարուեստը, նուրբ ճաշակը, պաճուճելու, զարդարելու շնորհը, որ լրացնէին ներդաշնակութեամբ բնութիւնը։ Բիւրականի ամարանոցի շէնքը երկու յարկով պարզ տուն է, բնդարձակ բակը ծածկուած է կանաչ խոտով, ոչ մի արհեստական բուրաստան, ոչ ծաղկոց, ոչ ճեմելու ճանապարհներ աւազով ցանած, ոչինչ կուտոտրական հետք չէք նշմարի. ամենայն ինչ վայրենի, խոպանացեալ, ձգած Թողած է բնութեան քմահաճութեանը։ Ո՛ւր է այն բիւրաստանը, ուր Վեհափառը կարողանար ազատ ժամերին ճեմել անձնատուր լինելով իւր խոհերին, առանց գրաւելու իւր վրայ անցաւորների ուշադրութիւնը։ Առանձին շէնքեր էլ չնկատեցի հիւրերի ընդունելութեան համար, որոնց թիւը, անկասկած, շատ մեծ կարող է լինել։ Նուաստիս համար չափազանց մեծ պատիւ էր իջնել Վեհափառի ննջարանին կից սենեակում։ Սրբ մօտենում ես Բիւրական գիւղին՝ քարուտ ճանապարհը անտառների է։ չեմ հասկանում թէ ինչպէս էին անցնում այնտեղից հանգուցեալ Գէորգ IV և Մակար I կաթողիկոսների կառքերը ամարանոց հասնելու համար։ Եթէ մի Խորէն Ստեփանէն Հին-Խրիմից մինչև Սուրբ Խաչ վանքը կարողացել է չինել երեք վերստ երկայնութեամբ մի խճուղի, ինչպէս մի ամբողջ միաբանութիւն անձեռնհաս է գտնուում նոյնն անելու գէթ Ագարակից մինչև Բիւրական։ Մեր հայրապետները ամենքն էլ Խրիմեան Հայրիկ չեն, որ Տրդատի նման այբրիվար կամակար աշտանակեալ և կորովի ձիավարեալ՝ կարողանան ձիով վեր ելնել Բիւրականի զառիվայրով։ Ժամի տասին եկաւ Ստեփան Յովհաննիսեանցը ինձ մօտ և միասին իջանք նոցա ամարանոցը, ուր մեր ձիերը պատրաստ էին։ Մեզ խորհուրդ էին տալիս իբրև ուղեցոյց առ-

նեւ Վեհափառի շաթիրներէց մէկին. բայց Ստեփանը չընդունեց այդ առաջարկութիւնը, ասելով թէ ինքն էլ քաջ գիտէ ճանապարհները դէպի մերձակայ գիւղերն ու վանքերը: Բիւրականից մենք սկսեցինք իջնել դէպի հարաւ. մեր առաջ երևում էր մի գիւղ, շրջապատուած այգիներով: Ի՞նչ գիւղ է, հարցրի Ստեփանից. Աշտարակն է, պատասխանեց նա. կանգնեցրու ձիդ և լսիր, ասումեմ նորան և կրկնում եմ Սմբատ Շահազի-գեանցի հետևեալ տողերը.

Գեղեցկանիստ է Աշտարակ.

Շատ այգիներ նա ունի

Այնտեղ երկինքն է կապուտակ,

Այնտեղ օդն է քաղցրալի և այլն:

Արդարև, բանաստեղծն իրաւունք ունէր այսպէս նկարագրելու իւր ծննդավայրը. անամպ կապոյտ երկինքը, հիւսնալի օդը, անվերջ այգիները կենդանի վկայ են դորան: Շտրունակում ենք մեր ճանապարհը դէպի Փարպի, ուր, ըստ աւանդութեան, ծնուել է Ղազարը, Վահան Մամիկոնեան իշխանի մանկութեան խաղերի ընկերակիցը, որ յետոյ գրեց մեզ Վահանայ պատերազմների պատմութիւնը: Ասում են թէ Ղազար Փարպեցին իբր թէ թաղուած է ոչ հեռի Փարպիից Լազրեվանքում. արդեօք նորա ոսկորներն էլ նախանձոտ արեղաները չեն թափել այն փոքրիկ գետակի (Քասաղի ճիւղը) մէջ, որ մենք ձիով անցանք: Փարպիից դիմեցինք ուղղակի Կարբի, Ներսէս արքեպիսկոպոսի, յետոյ կաթողիկոսի հակառակորդ՝ Յովհաննէս Կարբեցու ծննդավայրը: Այստեղ իջանք Ստեփանի մօրքորջ տանը ճաշելու և հանգիստ առնելու. մինչև ճաշը ժամանակ չկորցնելու համար, գնացինք եկեղեցին և նորան կից ուսումնարանը տեսնելու, ուր ապրում էր երիտասարդ ուսուցիչը իւր կողակցի հետ: Ուսուցչի անունը չեմ յիշում. նա մեզ ցոյց տուեց ուսումնարանի ընդարձակ և գեղեցիկ սենեակները, որ շատ կարգին պահւում էր չնորհիւ երիտասարդ գոյգի. պատերից կախուած էին աշխարհագրական քարտեզներ, պահարաններում շարուած էին և այլ ուսումնարանի պիտոյքներ, սեղանի վրայ երկրագունդը և այլն: Ուսուցչին հրաւիրեցինք ճաշի հիւրընկալ տանտիրոջ թոյլտուութեամբ. շաշից յետոյ երեք հօգուով գնացինք ոտով Յովհաննավանք, որ կառուցած է բարձր քարափի վրայ. ներքեում հոսում է Քասաղը. Սկեղեցու դմբէթը ծակուած է հնութիւնից, անձրեր ներս է թափւում. այդ պատ-

ճառով ժամասացութիւնը կատարուում է ընդարձակ կից խորանում, ուր պահուում է մի գեղեցիկ բոլորագիր աւետարան մետաքսեայ թաշկինակի մէջ փաթաթուած: Իմ հարցին, թէ ինչո՞ւ այս ձեռագիրը չեն ուղարկում Եղմիածնի մատենադարանը, մեր ուղեկից բարեկամը պատասխանեց, թէ վանքիս գիւղացիք շատ յարգում են իւրեանց հին սրբութիւն Աւետարանը, որ շատ հին գրչագիր է, կարծեմ, X դարու բան է, ասացին, ինչո՞ւ պէս մի վարդապետ բացատրել էր նոցա: Բայց ուշի ուշով զննելով այս բոլորագիր ձեռագիրը, նորա բիւզանդական խորանը, մանրանկարները ու ծաղկանկարները լուսանցքների վերայ և այլուր, շուտով համոզուեցայ, թէ դա XIV դարուց հին չէ կարող լինել: Վանքի գեղեցիկ ներսը, յայտնի բան է, մերկ էր բոլորովին, պատերի վրայ լաւ պահպանուած էին արձանագրութիւններ, որոնք վաղուց արդէն յայտնի են Շահխաթունեանցի գրուածքներից և Ալիշանի Այրարատից. ուստի երկար գրել դորա մասին մեր նպատակից դուրս է: Ս. սեղանը, կարծեմ, եօթն աստիճանից բարձր պիտի լինի. աստիճանները քանդուած են և բարձրանալ այնտեղ անհնարին է առանց սանդուղքի: Մի քանի արձանագրութիւններ եւ ընդօրինակեցի Շահխաթունեանցի հետ համեմատելու համար: Վերադառնալով Կարբի, հեծանք ձի և ուղևորուեցանք դէպի Մուղնի, ուր չգրտնելով վանահօր, բաւականացանք արտաքուստ միայն զննելու գեղեցիկ վանքը: Ժամի վեցի մօտ էր. պէտք էր շտապել Բիւրական և մենք ձիերի սանձերը թուլացնելով՝ սկսեցինք արագ արագ արչաւել առաջ, որ գիշերը չվրայ հասնի ճանապարհին: Նրկու ժամի չափ առաջ ընթանալով, յանկարծ ճանապարհը կորցրինք և չգիտէինք որ կողմը դիմել. հարց ու փորձ անելով հասանք մի գետակի եզրքը, ուր նստած էր մի ծերունի թուրք. Նա ցոյց տուեց ճանապարհը գետակի վրայից. բայց հարցնում եմ, նորանից, բուերդէ քէօփրիւ եօյմնադը (այստեղ կամուրջ չկայ) հայդա սու իջինէ (քշիւր ջրի մէջ), ասում է անտարբերութեամբ թուրքը: Նա յառաջում եմ, Ստեփանը հետևում է ինձ: Միւս ամի դուրս գալ անհնարին է, գետակի ափերը ուղղահայեաց են պատի նման: Ստիպուած ենք մի առ ժամանակ հետևել ջրի հոսանքով, որի խորութիւնը մեր բախտից մի կանգունից փոքր ինչ աւելի է. մեր կօշիկները թաց են արդէն. բայց մեզ փոյթ չէ. հարկաւոր է շուտով հասնել տուն, վասն զի մութը կոխում է կամաց կամաց: Ահա, վերջա-

պէս, ափը ցածանում է. մտրակի մի հարուած և իմ ձին սը-
 բարչաւ թռչում է ջրից ցամաք և ուրախ ու զուարթ սկսում է
 նեղ ճանապարհով բարձրանալ Արագածի լանջերի վրայ. Ստե-
 փանը բայլ առ քայլ հետևում է ինձ: Մինք վստահ ենք մեր
 ձիերի բնազդումին, որոնք, կարծես, գուշակում են շուտափայթ
 հանգիստը, մի ամբողջ օրուայ ճանապարհորդութիւնից յետոյ:
 Աշխուժութեամբ բարձրանում ենք անդադար. այնքան արդէն
 մութ է, որ առարկաները դժուարութեամբ ենք նշմարում:
 Յանկարծ իմ ձին ականջները ցցելով՝ անհանգստութեան նշան-
 ներ է ցոյց տալիս, բայց շարունակում է վերելքը: Նայում եմ
 առաջ մի յիսուն քայլ ինձանից հեռու, մթութեան մէջ երևում
 են երեք ստուերներ, որ շարժւում են մեր ուղղութեամբ. մի
 քանի բոպէից յետոյ պարզ նշմարում եմ երեք մարդ երկար
 ձողեր ձեռքերին: Սրբ մօտեցանք իրար, նոքա մեզ ճանապարհ
 տուին, աջ ձեռքը ճակատներին դնելով: Պէտք է նկատել, որ
 դիւիս վրայ պաշտօնական գլխարկ ունէի դրած. ուրեմն ող-
 ջոյնը գլխարկիս էր ուղղուած: Հազիւ անծանօթները անցան
 թէ չէ, իմ Ստեփանս յետևիցը կանչում է, քշիր շուտով, քշիր,
 դօքա քուրդ աւազակներ են: Ուրեմն, դռքս են ձեր քոյրերը,
 ինչ սարսափելի գազաններ են գիշերով: Գուցէ ցերեկով աւելի
 մարդավայել են: Իմ կարծեցեալ ձողերը նիզակներ էին. իսկ
 մէջքերի վրայ հրացաններ ունէին այդ անպիտանները. և եթէ
 կամենային մեզ գնդակահարել, ո՞վ նոցա ձեռքը պիտի բռնէր,
 քանի որ մենք զինուած էինք սոսկ մտրակով: Այս հանգաման-
 քը ինձ շատ զայրացնում էր. չմոռանա՞նք, որ դա 1896 թուա-
 կանին էր. երեք զինուոր քրդեր դուրս եկան մեր առաջ, դըլ-
 խից մինչև ուրք զինուած: Ակամայ մտրակը սեղմեցի ձեռքումս,
 քշելով ձիս ուղղակի նոցա վրայ. գարշելիները հազիւ ճանա-
 պարհ տուին մեզ, յակամայից շեղուելով դէպի ձախ: Իսկ Ստե-
 փանը, իմ Սանչօ Պանչօն անդադար յետևից կրկնում էր, քշիր
 ու քշիր: Սրբէք, պատասխանում եմ նորան, քշել—կնշանակէ
 փախչել քրդերից. նոքա շուտով կհասկանան մեր երկչոտութիւ-
 նը և մի մի գնդակ կարձակեն մեզ վրայ. այն ժամանակ ինչով
 կը պատասխանենք նոցա, մտրակով: Ոչ, տեղի տալ քրդերի
 առաջ ոչ գոռոզութիւնս է ներում, ոչ էլ ինքնասիրութիւնս: Ան-
 դադար վերև բարձրանալով, ես առաջից, Ստեփանը յետևից,
 հասնում ենք սարի վրայ, ճանապարհից դէպի ձախ մի արհես-
 տական հրապարակի, ուր վեց քրդեր, նստած կրակի շուրջը,

ընթերիք են անում: Նոքա լսելով մեր ձիերի սմբակների ձայնը, գլուխները դարձնում են մեր կողմը և, կարծես, սառած են մնում. այնքան, երևի, անսպասելի էր նոցա համար գիշերուայ այս ժամին անծանօթ ճանապարհորդներ տեսնել Արագածի այսպիսի անսպառ տեղում: Պէտք էր նոցա թմրութիւնը աւելի սաստկացնել: Տաան քայլ նոցանից հսկիս կանգնեցրի, իջաքած և անցնելով ձիու միւս կողմը, սկսեցի սռնձը ուղղել. իսկ յետոյ ցոյց տալով քրդերի վրայ, որոնք իրանց սպասողական դիրքը չէին փոխել, հարցրի Ստեփանից ռուսերէն, սոքա քրդեր են. նոքա ամառը այստեղ են դալիս եայլախ. միով բանիւ մի քանի վայրկեան կոտորուեցի և յետոյ անխռով նորից հեծայ ձին և շարունակեցի ճանապարհս: Խեղճ Ստեփանը, կնքածով էր, թէ ես գծուել եմ, իղուր ժամավաճառ լինելով այստեղ, փոխանակ փախչելու վտանգից: Բայց ես վտանգի առաջն էի ուզում առնել և կարծեմ, չսխալուեցայ: Երբ երկու հարկւր քայլ հեռացանք քրդերի որջից, մեր առաջն երևեցան Բիւրականի ճրագները, ուր և մենք շուտով հասանք, հազիւ հազ նշմարելով ճանապարհը: Հարցնում եմ Ստեփանից, այսօր քանի անգամ փրկուեցանք մահից. միայն երեք անգամ, պատասխանում է: Օրհնած, ասում, եմ դու էիր տանում ինձ, եթէ ճանապարհները չէիր ճանաչում, լաւ չէր, որ մի շաթիր առնէիք հետներս: Այդ օրուայ տպաւորութիւնները շատ հարուստ էին և անջնջելի: Միւս օրը Յովհաննիսեանցների տանը մորթեցին մի ոչխար և քիւֆտա պատրաստեցին. ճաշին հիւրերի թւում կար նաև մի թուրք-բէկ, լաւ որսորդ, որ որսի ժամանակ մի անգամ հրացանը ընկել էր նորա երկիւղից սառած ձեռքերից. երկիւղի պատճառը, պատմում էր նա, մի ահագին վիշապ է եղել, ժայռի վրայ պառկած: Երևի սա էլ այն վիշապներից էր, որ շատ սիրում էր սպանել Վահագն Վիշապաքաղը, ըստ Մ. Խորենացու: Նոյն օրը Բիւրականից էջմիածին վերադառնալու ժամանակ, իջանք Օշական Ս. Մեսրոպի գերեզմանին երկրպագելու: Շաբաթ օրն էր և եկեղեցում ժամասացութիւն կար. ճրագներ գնեցինք, վառեցինք սրբերի պատկերների առաջ և կարճ աղօթելուց յետոյ, քահանայի առաջնորդութեամբ իջանք ս. սեղանի տակը, ուր ամփոփուած է սրբոյն նշխարները: Գէորգ IV կաթողիկոսը չինել է տուել Մաշտոցի գերեզմանի վրայ այս եկեղեցին, որի բակում Վահան Ամատունու գերեզմանի վրայ Վեհափառ Հայ-
ԼՈՒՄԵՑ

րիկը կանգնել է նոր արձան, որ, տակաւին, գուրկ էր արձանագրութիւնից: Հասնելով էջմիածին անմիջապէս ներկայացայ վեհափառին և մանրամասն բերանացի հաշիւ տալով կատարած կարճ ճանապարհորդութեան մասին, արտայայտեցի իմ խորին շնորհակալութիւններս, Նորան, որ միջոց ընծայեց ինձ գէթ հարեանցի ծանօթանալ էջմիածնի շրջակայքի և քանի մի հնութիւնների հետ: Մանաւանդ ծանրացայ Յովհաննավանքի վրայ, որ կարօտ էր նորոգութեան: Հայրիկը նկատեց, «բարոգեցէք այդ մասին Մոսկվայի ազգայնոց մէջ, գուցէ գտնուին բարեպաշտ մարդիկ, որ նորոգութեան ծախսերը կհոգան»: Բայց Մոսկվայում մէջ տեղ եկաւ որբերի հարցը, որով մինչև այժմ բաղուած է հասարակութեան՝ յառաջագէմ մասը: Խորին պատկառանք առնելով վեհափառ Հայրիկի աջը, ես շտապեցի բարեկամ հայրերիս տները վերջին հրաժեշտ տալու: ապա, ես, Ստեփանը և նորա փոքր քոյր Սիրանոյշը ճեպակառքով ճանապարհ ընկանք դէպի Աղստաֆա և յետոյ Թիֆլիս, ուր և ժամանեցիք ողջ և առողջ: Առաջին այցելութիւնս, յայտնի բան է, Արզարի մօտ էր բանկում: Հէնց որ տեսաւ ինձ, բացականչեց, եղբայր, այս ինչ ես անում մեզ հետ, զնացիք, կորար, ոչ մի տող նամակ, ոչ մի լուր չհաղորդեցիք մեզ: ես այսօր հեռագիր տուի էջմիածին, հ. Նահապետեանին քո մասին ¹⁾: Ես պատմեցի բոլոր հանգամանքները անսպասելի յանձնարարութեան, որին արժանացայ Հայրիկի կողմից: Ուրեմն, եթէ այդպէս է, ես էլ քեզ մի նոր յանձնարարութիւն տամ, ասաց Արզարը և խնդրեց նկարագրել ճանապարհորդութեանս տպաւորութիւնները Արձագանքի համար: Ուրախութեամբ, պատասխանեցի ես նորան, միայն ոչ այստեղ, այլ Մոսկվայից, որովհետեւ վաղը պատրաստուում եմ դէպի հիւսիս: Այդ անկարելի է, դու շատ կվշտացնես մեր ծերունի բարեկամներին՝ Գէորգին, նկատեց նա: Չմշկեանին հարցնում եմ. ոչ, Բարխուդարեանին, որ վաղը երեկոյեան հրաւիրում է մեզ իւր մօտ. այնտեղ կլինեն մեր սովորական բարեկամները: Բաւականին դժուար էր զրուցիւնս. խնդիրը առկախ թողնեմք. ասացի. այժմ ես պէտք է Նրիցեանի մօտ գնամ. խօսելիք ունիմ նորա հետ. գուցէ ժամի երեքին հանդիպեմ քեզ դարձեալ այստեղ և շտապեցի

¹⁾ Ն. Բոգարջեանցի խնդիրքով, որի տանը իջել էի Թիֆլիսում: Մ. Շ.

դէպի Անշխատ եկեղեցու մօտ ընդկող ճգնաւորի տունը: Երեցեանին գտայ նորա ընդարձակ մատենադարանում, սեղանի առաջ, չըջապատած իւր ֆօլիանտներով: Ակնոցների տակից, նայելով վրաս, հարցրեց, ո՞նց էք, ձեր ճանապարհորդութիւնը յոջող էր, ինչ տպաւորութիւն թողեց ձեր վրայ իշմիածինը: Առհասարակ տպաւորութիւնը լաւ էր, պատասխանեցի. այնտեղ բաւական լաւ երիտասարդ ոյժեր կան, որոնք նուիրուած են հայ բանասիրութեան, ծանօթ ևրդական լեզուներին և հետևող գիտութեանց. ուրեմն յարեցի ես, իզուր էր կարծում հանդուցեալ Մ. Իմինը, թէ իւր և պրօֆ. Բ. Պատկանեանի մահից յետոյ էլ հայկաբան բանասէրներ մեր մէջ գուցէ, չերեւին: Ինչպէս տեսնում եմ, շարունակեցի, հանգ. Գաբրիէլ Այվազովսկին, Մաղաքիա Օրմանեան սրբազանները անջնջլի հետեւեր են թողել իշմիածնում: Եւ երկիւղ էի կրում, որ դուք ղգոհ դուրս կգաք իշմիածնից, նկատեց մեր հնագէտը, բայց այժմ տեսնում եմ, որ փոքր ինչ յոռետես եմ եղել և շատ ուրախ եմ, որ դուք, իբրև ոչ տեղացի, քաղցր տպաւորութեան տակ պիտի վերադառնաք Մոսկվա: Գիտէ՞ք, պ. Նրիցեան, ինչ նմանների թիւը շատ կստուարանար, եթէ մեր ունևոր դասը իւրեանց ընտանիքներով, փոխանակ տասն անգամ յաճախելու ժամանակակից բարիլոնները, այն է Բեռլին, Վիեննա, Պարիզը, իւրեանց կեանքում գէթ միանգամ ուխտի դնային Մայր Աթոռ, ինչպէս անում են մահմեդականները, որոնք աշխատում են գտնէ մի անգամ տեսնել Մեկկա և Մեդինա քաղաքները: Չէ կարելի սիրել մի կրօն, մի ազգ, մի երկիր, որոնց պատմութեանը մարդս անտեղեակ է: Օտարի նորաձևութեան ետևից վազող հայը միշտ եղել է միմոս կապիկ, կասկածելի ինքնուրոյնութեամբ. բայց դա շատ հին ճշմարտութիւններ են, որ բազմիցս արծարծուել է մեր պարբերական մամուլի էջերում, ապա, ուրեմն, չարժէ այդ մասին խօսել: Լուրջ ուշադրութեամբ լսելուց յետոյ, Նրիցեանը հարցրեց. բայց վաղը երեկոյեան դուք ո՞ր կլինիք: Կսլանամ դէպի Բաթում, ասացի. Իսկ ես ձեզ ճաշի էի ուզում հրաւիրել, որ հիւրս լինիս մինչև երեկոյ: Դատ շնորհակալութիւն, պատկառելի բարեկամ, բայց կներէք ինձ, պատասխանեցի. ես եկել եմ տալ ձեզ իմ վերջին հրաժեշտ: Այս ասելով ես վերկացայ և անկեղծ սիրով ու յարգանքով զրկեցի իմ պատուական բարեկամիս և դիմեցի բանկ: Անցնում եմ սենսակների միջից դէպի Արգարի սեղանը. նորա մօտ

կանգնած է Գէորգ Բարխուդարեանցը: Արգարը նկատելով ինձ, ասում է ծերունուն, ահա քեզ Շովրեանը, ինքդ համարիր, եթէ կարող ես. իսկ ինձ մի խանդարիր Արձազանքի համարները կազմելու: Մենք Բարխուդարեանցի հետ սկսում ենք մի երկար բանակցութիւն. Արգարը գրում է իւր թերթիկները: Վերջապէս, իբր համբերութիւնը կորցնելով, բացականչում է, Շովրեան, վերջացրու է, ասը՛ր լրագրիս համարները կարող եմ ուշացնել: Զգիտեմ, արդեօք այդ բոպէին անկե՛ղծ էր Արգարը, թէ դա մի շատ յաջող volte-face էր նորա կողմից, որ զինաթափ արեց ինձ, ինչիցէ, հաւանութիւն տալով, թէ մի օրով կը յետաձգեմ գնալու դիտաւորութիւնս, հեռացայ նոցանից, վասն զի դեռ ես մի քանի գործեր ունէի: Բանն այն էր, որ երկու շաբաթ մնալով Թիֆլիզում ես, ի միջի այլոց, զբաղուած էի Արգարի հին ձեռագիրներին ուսումնասիրութեամբ, որոնց մանրանկարները Արգարը իւր հաշուով լուսանկարել էր տուել Նրմակովի մօտ մասամբ էլ նոյնը նորա խնդիրքով հանել էր գնդապետ Օլդեկօպը: Գնացի հաւաքելու այդ բոլորը: Արգարի ձեռագիրներին ես նուիրեցի մի առանձին զեկուցումն, որ և կարդացի Մոսկվայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան Արեւելեան մասնախմբի նիստերից մէկում: Զեկուցմանս ռեզիւմէն տես—Старинныя армянскія рукописи собрания г. Абгара Иоаннисіани въ Тифлисѣ. Древности Восточныя. Труды Восточной комиссіи Императорскаго Московскаго Археологическаго общества т. II. выпускъ II. стр. 156—158. Москва 1901: Ի դէպ, նոյն հատորի մէջն են նաև իմ միւս երկու զեկուցումներս ա. Надписи храма св. Рипсиміи въ Вагаршапатѣ. р. Армянскій текстъ Паралипоменонъ (գիրք Մնացորդաց Նդ. վ. Զալախեանցի) издан. Лазарев. Инст. 171—173, 184. Միւս օրը երեկոյեան երբ եկայ Գ. Բարխուդարեանի մօտ, բարեկամներս in corpore հաւաքուած էին արդէն: Երիցեանը տեսնելով ինձ, բացականչեց, դուք դեռ այստեղ էք. հարկ զօրէնս լուծանէ, պատասխանեցի: Այդ երեկոյ իմ անկեղծ բարեկամներին շրջանում անց կացրի, որոնց երեքին, աւաղ, ինձ այլ ևս չէ վճակուած տեսնելու: անգուգական Արգարին, պատուական ծերունի Ա. Երիցեանին և չիտակ, տաքարին Ա. Թարխանեանցին, որի եղբրական մահը Բաթումում ինձ մեծ վիշտ պատճառեց. Բաթումը հասկատազրական վայր է դարձել իմ բարեկամներին համար:

Այժմ Աբգարի թարմ գերեզմանը խթան դարձաւ ինձ համար
և կենդանացրեց իմ մտքումս այն քաղցր տպաւորութիւնները,
որ դորձեց իմ վրայ Արձագանքի անմահ խմբագիրը իւր սերտ
բարեկամ աշխատակիցների հետ միասին: Ողբալով Աբգարի
մահը, ձօնում եմ նորա յիշատակին սոյն անջնջելի տպաւորու-
թիւններս իբր տրիտուր նորա ինձ ցոյց տուած բարեկամու-
թեան համար: Տէր ընկալ խաղաղութեամբ զհոգի հանգուցեալ
Աբգար ծառայի քո:

Մ. ՇՈՎՐԵԱՆ

Մայիսի 21-ին 1904
Մոսկվա